ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մայիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-087-03.04.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 408 - Ա որոշումը:

Հարգանքով՝

/ ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-087-03.04.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է ԱԱՀ-ի շեմը վերականգնել մինչև 2019 թվականի հունվարի 1-ը գործող՝ տարեկան կտրվածքով իրացման շրջանառության 115 մլն դրամի մակարդակում, նվազեցնել հանրային սննդի կազմակերպման գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների հարկային բեռը՝ այն ամրագրելով 2018 թվականի երկրորդ կիսամյակի համար սահմանված չափով (իրացման շրջանառության 6 տոկոս՝ հանած ծախսերի 3 տոկոսը, բայց ոչ պակաս իրացման շրջանառության 4 տոկոսից, 2019 թվականի համար սահմանված՝ համապատասխանաբար 8 տոկոսի և 5 տոկոսի փոխարեն):

Առաջարկություններ ներկայացնելը հիմնավորվում է ՓՄՁ-ի ոլորտի հարկային միջավայրը հնարավորինս շուտ բարելավելու և վարվող քաղաքականության կանխատեսելիությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող՝ շրջանառության հարկ վճարող համարվող տնտեսավարող սուբյեկտների կողմից 2019 թվականի առաջին եռամսյակի համար շրջանառության հարկի հաշվարկներ ներկայացնելու վերջնաժամկետի՝ ապրիլի 20-ի մոտենալու հանգամանքով:

Այդ կապակցությամբ, հայտնում ենք հետևյալը:

Օրենքի նախագծով ներկայացված նույն առաջարկությունները ներկայացվել են նաև «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի

21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և կից օրենքների նախագծերի փաթեթով (Կ-075-29.03.2019-ՏՀ-011/0), որը 2019 թվականի մարտի 7-ին արժանացել է Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանը և ներկայացվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով՝ քննարկման: Նշված օրենքների նախագծերի փաթեթով, բացի վերոնշյալ առաջարկություններից, ներկայացվել են նաև բազմաթիվ այլ առաջարկություններ, որոնք փոխկապակցված են, կրում են համակարգված (ոչ տեղային) բնույթ և արտացոլում են Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով նախանշված՝ ուղղակի հարկերի գծով հարկային բեռի նվազեցման և դրա արդյունքում առաջացող՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հարկային եկամուտների կորուստը որոշակիորեն փոխհատուցելու քաղաքականությանն ուղղված լուծումները: Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված օրենքի նախագծով անդրադարձ է կատարվում ոլորտային նշանակություն ունեցող մի շարք խնդիրների, որոնցից մի քանիսը, ի դեպ, նույնպես հրատապ լուծումներ են պահանջում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2018 թվականի նոյեմբերի 27-ի N ՍԴՈ-1436 որոշման հիման վրա կատարվող փոփոխություններին (որոնց վերջնաժամկետը 2019 թվականի մայիսի 1-ն է).

2) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող ավտոմեքենաների առք ու վաճառքի գործարքներից առաջացած եկամտային հարկի դրույքաչափերի նվազեցմանը վերաբերող առաջարկությանը (անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ 2018 թվականի համար եկամտային հարկի տարեկան հաշվարկները պետք է ներկայացվեն մինչև 2019 թվականի ապրիլի 20-ը ներառյալ).

3) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից թեթև մարդատար ավտոմեքենաներով տաքսի ծառայությունների մատուցումը պետական տուրքից ազատելուն (խնդիրն այն է, որ առկա սոցիալ-տնտեսական իրավիճակում պետական տուրքի վճարումը մեծ բեռ է դարձել այս շրջանակի անձանց համար).

4) Հայաստանի Հանրապետությունում գրանցված բեռնատար ավտոմեքենաների մասով սահմանված ճանապարհային հարկը վերացնելուն (խնդիրն այն է, որ 2018 թվականի հունվարի 1-ից բարձրացվել են միջազգային բեռնափոխադրման գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվող ճանապարհային հարկի դրույքաչափերը, ինչը նույնպես խնդիրներ է առաջացրել ռազմավարական նշանակություն ունեցող այս ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար):

Ամփոփելով շարադրվածը՝ խնդիրներին ավելի համակարգային լուծում տալու նպատակով առաջարկում ենք ձեռնպահ մնալ ներկայացված օրենքի նախագծի քննարկումից և դրա դրույթներին անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացված օրենսդրական նախաձեռնության քննարկումների շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2019 թվականի N 408 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-087-03.04.2019-ՏՀ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. ապրիլի 15
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-087-03.04.2019-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ, 254-րդ եւ 255-րդ հոդվածներում «58,35 միլիոն» բառերը փոխարինել «115 միլիոն» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 258-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի աղյուսակի «Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներ» տողի 2-րդ սյունակի «8» թիվը փոխարինել «6» թվով.

2) 3-րդ մասում «հինգ» բառը փոխարինել «երեք» բառով:

Հոդված 3. Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Մինչեւ սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողները 2019 թվականի ընթացքում շարունակում են համարվել ԱԱՀ վճարողներ:

Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից եւ կիրառվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում ներառվող հաշվետու ժամանակաշրջանների համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկի հաշվարկման նպատակով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Շրջանառության հարկի մասով

Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է շրջանառության հարկ վճարող համարվելու շեմը սահմանել տարեկան կտրվածքով իրացման շրջանառության 115 մլն դրամի չափով՝ ներկայումս գործող 58.35 մլն դրամի փոխարեն: Հիշեցնենք, որ ՀՀ հարկային օրենսգրքի գործող կարգավորումների համաձայն՝ 2019 թվականի հունվարի 1-ից ԱԱՀ-ի շեմը տարեկան կտրվածքով 115 միլիոն դրամից նվազել է եւ դարձել 58.35 միլիոն դրամ, ինչը հանդիսանում է փոքր եւ միջին ձեռնարկատիրության հարկային միջավայրի վատթարացում:

Չնայած այն հանգամանքին, որ ներկայումս Կառավարության կողմից շրջանառության մեջ դրված Հարկային օրենսգրքի փոփոխությունների նախագծով նախատեսվում է նշված շեմի փոփոխություն եւ 115 մլն դրամի չափով սահմանում, այդուհանդերձ, հաշվի առնելով Հարկային օրենսգրքի փոփոխությունների փաթեթի ընդունման ժամկետների եւ ընթացակարգերի ժամանակատարությունը, ինչպես նաեւ ՓՄՁ ոլորտի հարկային միջավայրի հնարավորինս շուտ բարելավման հրատապությունն ու վարվող քաղաքականության կանխատեսելիության բարձրացման անհրաժեշտությունը, հարկ ենք համարում այդ փոփոխությունն իրականացնել ավելի շուտ՝ առանձին օրենսդրական նախաձեռնության տեսքով:

Հանրային սննդն ոլորտի հարկման մասով

Մյուս խնդիրը կապված է հանրային սննդի ոլորտի հարկման համակարգի հետ: Հանրային սննդի ոլորտի գործունեությունը 2018 թվականի հուլիսի 1-ից արտոնագրային հարկի համակարգից տեղափոխվել է շրջանառության հարկի համակարգ եւ նախատեսվել է, որ հետագա տարիներին գործունեության այս տեսակի մասով սահմանված հարկային բեռը աստիճանաբար կբարձրանա:

Հետապնդելով տվյալ ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների հարկման պայմանների բարելավման նպատակ՝ Կառավարության կողմից շրջանառության մեջ դրված Հարկային օրենսգրքի փոփոխությունների նախագծով առաջարկվում է նվազեցնել հանրային սննդի ոլորտում գործունեությամբ զբաղվողների հարկային բեռը՝ այն ամրագրելով 2018 թվականի երկրորդ կիսամյակի համար սահմանված չափով՝ իրացման շրջանառության 6 տոկոս՝ հանած ծախսերի 3 տոկոս, բայց ոչ պակաս իրացման շրջանառության 4 տոկոսից: Սակայն խնդիրն այն է, որ տվյալ ոլորտի ընկերությունները 2019 թվականի առաջին եռամսյակի հարկային հաշվետվությունները պետք է ներկայացնեն մինչեւ ապրիլի 20-ը: Քանի որ Կառավարության կողմից ԱԺ ներկայացված Հարկային օրենսգրքի փաթեթը մինչեւ նշված ժամկետը հնարավոր չէ ընդունել, ուստի տնտեսվարողները ստիպված են լինելու հաշվետվությունները ներկայացնել ըստ նախկին կարգավորման (8% - 5%), որից հետո ճշգրտել այդ հաշվետվությունները՝ ըստ բարելավված դրույթների:

Նշված խնդիրներից խուսափելու համար առաջարկում ենք թե՛ շրջանառության հարկի շեմի եւ թե՛ հանրային սննդի ոլորտի հարկման դրույքաչափերի մասով կարգավորումները՝

որպես առանձին օրենսդրական նախաձեռնություն, արագացված կարգով քննարկել ԱԺ-ում եւ ընդունել: